

S. ՇՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Միջեկեղեցական հարաբերությունների քաժին

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ. **ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ** **(Համառոր ակնարկ)**

«... Հայր սուրբ, պահեա զետսա յանուն
 Քո, որով եպուրն ինձ, զի եղիցին մի՝ որ-
 պէս և մեք մի եմք»:

(Տովի. ԺԷ 11)

Հովհաննես ավելարանչի միջոցով մեզ են փոխանցվել Տիրոջ քահանայապետական աղոթքի այս դրույթը, որոնց հետ հազիվ թե մեկը չխամաճայնվի: Այսինքն՝ քրիստոնյաների միությունը, իրենց Եկեղեցիներով հանդերձ, բխում է ավելարանական ճշմարգությունից:

Եկեղեցիների միջև առկա պատրմական դրաբերություններն ու դրակարձությունները լուծելուն ի խնդիր, մեր ժամանակները, առավելաբար սկսած 20-րդ դարից, հայրնի է «Եկումենիկ» շարժումով, որը կոչված է վերահասկապելու մերը և բարեկամությունը, փոխադարձ հարգանքն ու վստահությունը Եկեղեցիների միջև և մղելու նրանց դեսանելի միության:

Բնական է, Հայ Առաքելական Եկեղեցին իր նվիրապետական Աթոռներով և իր հավաքայցայ հոգով ի Հայպատան և ի Սիյուս աշխարհի չեր կարող անմասն մնալ այդ շարժմանը: Ազելին, Հայ Եկեղեցու պատրմության էկումենիկ շերքը հազարամյա հնություն ունի: 20-րդ դարի մեծագույն Եկեղեցական գործիչներից մեկի՝ Երջանկահիշարակ Գարեգին Ա Կաթողիկոսի խոսքով, չնայած հայոնի պատրմական բաժանումներին, «Հայ Եկեղեցին միշտ ազդել և ազդել է քոյր Եկեղեցիներից»: Հայոց հինավոր Եկեղեցին, Օրմանյան Պատրիարքի խոսքերով, «հանդուրժողականության ողով» առեցուն միշտ ձգվել է համագործակցության, փոխադարձ կապերի հասկապման ու Քրիստոնեական սիրո դրսնորման և, Խրիմյան Հայրիկի պատրկերավոր բնորոշմամբ, Եկեղեցիների այս բազմազանությունը իրենից ներկայացնում է մի «ծաղկեսիոնց», ուր ամեն մի ծաղկի ունի իր ուրույն գոյնը, իր ուրույն երանզը և իր ուրույն բռյուրը, որոնք բոլորը մեկնեղված են Քրիստոսի սիրո կապով»:

Երբեմն հարց է դրվում, թե արդյոք էկումենիկ շարժումը վիտանգ չի՝ ներկայացնում Հայոց Եկեղեցու ծեսի, դավանանքի և ընդհանրապես հոգևոր ինքնության համար: Ի պատրասխան նման հարցադրման, վկայակոչներ երջանկահիշարակ Վազգեն Ա Կաթողիկոսի ԱՍՄ Եկեղեցիների Ազգային Խորհրդում ունեցած ելույթի հետքեալ խոսքերը. «Քրիստոս մեր արյան մեջ առած, իրեն Ասքված և իրեն Փրկիչը մնը, Մենք ուխտած ենք առաջնորդել Հայ Եկեղեցին քրիստոնեական սիրո և միության ճանապարհով, պահելով ու պահպանե-

լով մեր քրիստոնեական հին դավանանքը և վարդապետությունը, մեր սուրբ կանոնները, մեր ավանդություններն ու մեր ազգային նկարագիրը»¹:

Վեհափառի որդեգրած այս քաղաքականությունը նաև իր շարունակությունն է գրել իր երջանկահիշապակ հաջորդի՝ Գարեգին Ա-ի (կրտ. 1995-1999 թթ.) գործերում և այժմ շարունակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի անմիջական նախաձեռնությամբ և գրեսությամբ:

Բնական է, որ Հայ Եկեղեցու մասնակցությունն Էկումենիկ շարժմանը երբեմն չի կարող դիմում Հայ Եկեղեցու դիրքերի գիշում: Ավելին, այն հարսացնող մի փորձառություն է և իր դրական լիցքերն է հաղորդում մեր Եկեղեցու առաքելությանը:

Լազգեն Ա Վեհափառի զահակալության դարիմներին միջնավական հարաբերությունների վերելքը սկսվեց 1960-ական թվականների սկզբից: Այս շրջանին են վերաբերվում երկու կարևոր փաստաթղթեր: Դրանցից առաջինը 1962 թվականին Ազգային Եկեղեցական ժողովին՝ Լազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գելույցի 16-րդ և 17-րդ կերպերն են՝ ի խնդիր քոյր Եկեղեցիների և ԵՎԽ-ի հետ նրա ծավալած գործունեության, և 1965 թվականի Եկեղեցիների միության հարցի շորջ Հայրապետական սրբարակ կոնդակը:

Հայ Առաքելական Եկեղեցին Էկումենիկ շարժմանն սկսել է մասնակցել որպես դիմուրդ դեռևս 1927 թվականի Լոգանի և 1937 թվականի Էղինբորդի ժողովներին, ինչպես նաև ԵՎԽ 1948 թվականի Ամստերդամի առաջին ընդհանուր ժողովին, 1952 թվականի Լունդի, 1953 թվականի Էնվասրոնի և Նոր Դնիլի 1961 թվականի ժողովներին:

1959 թվականին ԵՎԽ պարփիրակությունն այցելում է ԽՍՀՄ, այդ թվում՝ Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ զիսավորությամբ ԵՎԽ զիսավոր քարտուղար Վ. Վիսրոյ Հովովի: ԵՎԽ Կենդրունական վարչությունը 1962 թվականի օգոստոսի 7-17-ը կայացած նրսութաշրջանում, ընդառաջելով Լազգեն Առաջինի դիմումին, Հայ Առաքելական Եկեղեցին ընդունում է որպես անդամ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի: 1962 թվականին «Էջմիածին» ամսագրում նշվում է, որ «Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդը», Հայ Եկեղեցուն ընդունելով որպես իր լիիրավ անդամ, «հանդիսավոր կերպով նշեց ու արձանագրեց, թե մեկ է և անբաժանելի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով, հոգևոր վերին իշխանությանը ներքև Ամենայն Հայոց Հայրապետության»²:

Թեև ԵՎԽ-ում Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացված է երկու նվիրապետական Աթոռներով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսություն և Մեծի Տանն Կիրիկիո Կաթողիկոսություն, «հետ սպորագրության գրավոր հայքարարության մը, որով Մայր Աթոռին և Ամրիի-ասի ներկայացուցիչները կհասպատեն, թե մեկ է Հայաստանյայց Եկեղեցին, թե Ս. Էջմիածինի հոգևոր հեղինակության վակ կգրնվի ամբողջ Հայ Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով, և թե Ս. Էջմիածին և Կիլիկյան Աթոռները ունին իրենց իրավասությանց սահմանները»³:

¹ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի Հայրապետական նրկորդ ուղևորությունը, Էջմիածին, 1963 թ., լ. 47:

² «Էջմիածին», 1962, Ը, լ. 10:

³ «Էջմիածին», 1962, Ժ-ԺԱ, լ. 42:

Դայ Եկեղեցու համար պատմական նշանակություն ունեցող ԵՆԻՍ-ի Կենտրոնական Վարչության 1962 թվականի Փարիզյան նիստի ընթացքում Դայ Եկեղեցու պատվիրակությունը ներկայացված էր Արևմբյան Եվրոպայի Հայրապետական Պարվիրակ Տ. Սերովին նաև Մանուկյանի զինավորության՝ ընկերությամբ՝ Ս. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Մանուկյանի և Տ. Պարզև վրդ. Գևորգյանի:

Վյաշիսլ, 1962 թվականից Դայ Առաքելական Եկեղեցին ԵՆԻՍ-ի անդամ է: Որքանով է արդյունավետ այս համազործակցությունը՝ քակավին պիտի արժեվորվի, սակայն այդ օրերի համար այս փասքը մի մեծ ձեռքբերում էր:

Եկեղեցիների միության մասին հայրապետական սրբարատ կոնդակում ասվում է. «Եկեղեցին, իբրև աստվածային նախախնամության գործ, անշուշփ մեկ է և տիեզերական, սակայն այդ աստվածային վրաօրինության իրազործումը երկրի վրա զգեցած է և կզգենու արդարացն փարքեր փարազներ համաձայն ժողովներու հոգեկան դիմագծության և Ասքծո խոսքը ընկալելուն և ապրելու կերպին, և համաձայն պատմական իրադարձությանց ու ավանդություններին, որոնց մեջ ծնած ու աճած են Եկեղեցիները ... Մեր օրերուն, փառը Ամենակալին, այլևս չկան ոչ բարեկամական դրսնորումներ Եկեղեցիների միջև: Այլևս ոչ ոք չի մրածեր իին վեճերու և հակառակություններու մասին: Վյար բոլոր Եկեղեցիները, բոլոր քրիստոնյաները կիսուին փոխադարձ հաճության մասին, գործակցության մասին, միության մասին...»⁴:

ԵՆԻՍ-ի կենտրոն էր, որ ոչ միայն քննարկվում էին աստվածաբանական հարցեր, այլև այն կրում էր քաղաքական և ընկերային բնույթ: Սա հնարավորություն է բալիս Եկեղեցիների ներկայացուցիչներին ԵՆԻՍ ամբիոններից ի լուր աշխարհի ձայն բարձրացնել հանուն արդարության, հավասարության, սիրո ու խաղաղության:

Մեր ժամանակներում, որպես արդյունք փոստ-մոլեխիստրական գաղափարախոսության և աշխարհականացման, Օլղափառ Եկեղեցիները ԵՆԻՍ-ում կանգնած են լուրջ մարդարավերների առջև: Նոյնիսկ 1998 թվականին Զիմբաբվեում դեղի ունեցած ԵՆԻՍ 8-րդ Ընդհանուր համաժողովից առաջ վրանքը կար, որ Օլղափառ աշխարհը կղաղաքների իր մասնակցությունը ԵՆԻՍ-ին, որը և բակավին առկա է՝ պայմանավորված անդամ մի շարք Եկեղեցիներում դեղ զբած ոչ ընդունելի երևույթներով: Սակայն իրավիճակը այդպիսին չէր 20-րդ դարի երրորդ քառորդում:

Սա մի ժամանակաշրջան էր, երբ Օլղափառ աշխարհն իր մասնակցությամբ ԵՆԻՍ-ն դարձեց իրապես «Տիեզերական շարժում»: Սա մի ժամանակաշրջան էր, երբ զարգանում էր Եկեղեցիների տեսանելի միության գաղափարը՝ «միություն բազմազանության մեջ» կարգախոսով: Կազմակերպվում էին աստվածաբանական գիրաժողովներ, ուսումնասիր-փում էին անդամ թե՛ իին և թե՛ նոր Եկեղեցիների պարմությունները:

Միջնադարության հարաբերություններին զարկ դալու համար Մայր Աթոռում 1967 թվականից բացվում է Միջնադարության հարաբերությունների գրասենյակը, որը հաջորդաբար դեկանալու են Տ. Արևել վարդապետ Պետրակյանը, Տիգրան Պարզը Շահբագյանը և Տ. Ներսես Եպիսկոպոս Պողապալյանը: Վազգեն Ա Հայրապետի օրոք Դայ Եկեղեցին ան-

⁴ Հայրապետական Կոնջակ, «Էջմիածին», 1965, Ե-Զ-Է, լո 4:

դամ դարձավ ոչ միայն ԵՎԽ-ին, այլև Հայ Եկեղեցու Սփյուռքի թեմերն անհամագրվեցին իրենց համապատասխան երկրներում գործող Եկեղեցիների Ազգային Խորհուրդներին և փարածաշրջանային այլ էկումենիկ կազմակերպություններին:

Վազգեն Ա-ի գահակալության շրջանում դեռի են ունեցել հետևյալ համաժողովները և բանակցությունները, որոնք ներկայացնում ենք ստորև.

ԵՎԽ-ի համաժողովներ

ԵՎԽ ընդհանուր ասամբլեանները կամ համաժողովները գումարվում են 7 փարին մեկ: ԵՎԽ առաջին երեք համաժողովներին Հայ Եկեղեցին մասնակցել է դիվորդի կարգավիճակով: 4-րդ ընդհանուր ժողովից սկսած Հայ Եկեղեցու ներկայացուցիչներն սկսում են մասնակցել որպես լիիրավ անդամներ ու պարվիրակներ Հայ Առաքելական Եկեղեցու:

Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության փարիններին դեռի են ունեցել հետևյալ ընդհանուր ժողովները.

1. 1968 թ. Ուպսալայի (Շվեդիա) 4-րդ ժողով
«ԵՍ ԱՄԵՆ ԲՆՉ ԿՆՈՐՈԳԵՄ» կարգախոսով

Հայոց Եկեղեցուց մասնակցել են.

- S. Սերովիք արքեպիսկոպոս Մանուկյան,
- S. Պարզե Եպիսկոպոս Գևորգյան,
- S. Մեսրոպ ծ. Վարդապետ Գրիգորյան,
- S. Ներսես ծ. Վարդապետ Պողապայյան,
- S. Արսեն Վարդապետ Պերպերյան:

Այս ժողովի ընթացքում S. Մեսրոպ ծ. Վարդապետ Գրիգորյանն ընդրվում է «Հավաք և Կարգ» հանձնախմբի անդամ, իսկ Ներսես ծ. Վարդապետ Պողապայյանը՝ ԵՎԽ Կենտրոնական Վարչության անդամ: Եւթագայում Կենտրոնական Վարչության նիստերին նաև մասնակցում էր Տիար Պարզե Շահբագյանը:

2. 1975 թ. Նայրիորիի (Քենիա) 5-րդ ժողով
«ԴՐՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ ԵՎ ՄԻԱՅՆՈՒՄ Է» կարգախոսով

Մասնակցել են.

- S. Թորգոն արքեպիսկոպոս Մանուկյան,
- S. Շահե արքեպիսկոպոս Աճեմյան,
- S. Ներսես Եպիսկոպոս Պողապայյան,
- S. Արսեն Եպիսկոպոս Պերպերյան,
- Տիար Պարզե Շահբագյան:

Այս ժողովի ընթացքում Հայ Եկեղեցու Կնքարոնական կոմիտեի անդամներ ընդունվեցին S. Շահե արքեպիսկոպոս Աճեմյան ու S. Արսեն Եպիսկոպոս Պերպերյանը:

**3. 1983 թ. Վանկուվերի (Կանադա) 6-րդ ժողով
«ՄԱՍԻՆ ՔՐԻՍՏՈՄ ԿՅԱՆՔԸ ԱՇԽԱՐԴԻ» կարգախոսով**

Մասնակցել են.

- S. Թորգոն արքեպոս. Մանուկյան,
- S. Շահե արքեպոս. Աճեմյան,
- S. Վաշե արքեպոս. Ռովսեփյան,
- S. Ներսես Եպոս. Պողապայյան,
- S. Տիրան Վլոդ. Կյուրենյան,
- S. Եղիշիկ Քին. Պերրոսյան:

Այս ժողովին քննարկվեցին Մկրտության, Հաղորդության և Ձեռնադրության խորհուրդներին բնակչության դիրքածինը՝ կազմակերպությունը դիմումը: Նախորդ Վարդիներին այս խնդիրների շորջ «Հայոց և Կարգ» համձնախմբում բեղի էին ունեցել մի քանի քննարկումներ և Եկեղեցիներին առաջարկվել «Լիմա դոկումենտը»: Վերջինս կամ BEM (baptism, Eucharist և Ministry) ԵՆԻ պարագաներում ձեռքբերված կարևորագույն փաստաթղթերից է, որը դակավին բաց է քննարկման և հետազոտության համար:

Այս ժողովի ընթացքում հայ պատրիարքին առաջարկով քննարկվեց 1915 թվականի Հայոց ցեղասպանության հարցը: Ընդունվեց 4 կերպերից քաղկացած մի քանածն, որով ճանաչվում էր Հայոց ցեղասպանությունը, կոչով դիմում էր արվում ՄԱԿ-ի Գլխավոր քարոզության և ԵՆԻ Գլխավոր քարտուղարին, որպեսզի այս հարցը քննարկվի անդամ Եկեղեցիներում:

**4. 1991 թ. Կանքերայի (Ավստրալիա) 7-րդ ժողով
«ՍՈՒՐԲ ՀՈԳԻ, ԱՐԻ ԵՎ ՎԵՐԱՇՈՐՈԳԻ ԱՄԲՈՂՋ ՍՏԵՂՄԱԳՈՐԾՈՒԹ-
ՅՈՒՆԸ» կարգախոսով**

Հայ Եկեղեցու պատրիարքակությունը քաղկացած էր 12 հոգուց՝ գլխավորությամբ Ներսես արքեպոս. Պողապայյանի: Սույն ժողովի ընթացքին ժողովականներն անհաղարձան նաև արցախահայության խնդրին: Ժողովի ընթացքում ընթերցվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուղերձը՝ ի խնդիր արցախահայության իրավունքների պաշտպանության: Ի պատրասխան հայ պատրիարքակության խնդրանքի՝ ԵՆԻ-ի ժողովական անդամներն արձանագրեցին. «Մենք մրահոգված ենք, Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը զոհ է դառնում խրբականության, ահարեկության և բռնությունների»: Նոյն հայքարարությամբ ԵՆԻ-ն նաև հայքարարեց.

- անմիջապես միջոցներ ձեռք առնել հայ ազգաբնակչության կրոնական, մշակութային և ազգային շահերը պաշտպանելու,
- ապահովելու Ղարաբաղի շրջանի բոլոր բնակչուների մարդկային իրավունքները,

- դիմել անդամ բոլոր Եկեղեցիներին, որ աղոթեն հայության համար, որոնք «պայքարում են հանուն արդարության ու խաղաղության»:

1965 թվականի Ադիս Աբերայի ժողովը

ԵՇԽ-ին Հայ Առաքելական Եկեղեցին անդամագրվեց իր երկու նվիրապերական Աթոռներով: Միևնույն ժամանակ Հայ Առաքելական Եկեղեցին իր դավանանքով և ավանդություններով պատրիարքություն է Եկեղեցիների Օւղղափառ ընդանիքին, որն իր հերթին բաժանվում է երկու խմբի՝ Դին Արևելյան Օւղղափառ (Oriental Orthodox Churches) և Արևելյան Օւղղափառ (Eastern Orthodox Churches):

Մինչ ԵՇԽ-ում այլ Եկեղեցիների հետ պաշտոնական բանակցություններ վարելը, բնական է, որ Հայ Եկեղեցին իր կեցվածքը պեսքը է ճշգրիտ այս Եկեղեցիների նկարմամբ, որոնց մեջ առաջինը Դին Արևելյան Օւղղափառ Եկեղեցիներն էին:

Էկումենիկ շփումների արդյունքում առաջին քայլը եղավ այս Եկեղեցիների հետ Հայ Եկեղեցու դիրքորոշման ճշգրումը: 1965 թ. Վազգեն Ա-ի ղեկավարած պարտիակությունը մասնակցեց Երովությայի մայրաքաղաք Աղյուս Վրեբայում Երովությայի կայսր Հայեն Սելաշինի հրավերով գումարված այս հինգ Եկեղեցիների գահակալների հանդիպմանը:

Ժողովականները հանդես եկան հայութարությամբ, որ իրենք «կիսում են միևնույն հավատքը»⁵: Հայ Եկեղեցու կյանքում սա արդի Եկեղեցու պարմության կարևորագույն փաստարդերից մնեն է, որն արդյունք է լայնախոհության, և որ աներկրայորեն թագավորում է «միություն ի կարևորություն երկրայիշ և սեր ամենայնուն» կարգախոսը:

Պարմությունից հայդինի են դեպքեր, երբ նույնիսկ ծիսական փեղական նշանակություն ունեցող հարցերին փրկում էր սուր դավանարանական բնույթ: Այս երևույթը պարբռած էր հանդիսանում խորը դարձայնությունների: Աղյուս Վրեբայի համաձայնագրով, ժամանակի պահանջների թերարանքով, այն հաղթահարված էր: Սա նոր մորթեցում էր և արդյունք՝ առողջ աստվածաբանական միաձողության: 1965 թվականից Հայ Առաքելական Եկեղեցին հաղորդության մեջ է Դին Արևելյան քույր Օւղղափառ Եկեղեցիների հետ:

Հարաբերությունները Արևելյան Օւղղափառ Եկեղեցիների հետ

Էկումենիկ-Միջնակենտրոնական հարաբերությունների արդյունքում Հայ Առաքելական Եկեղեցին, որպես մեկը Դին Արևելյան Օւղղափառ Եկեղեցիներից, աստվածաբանական 4 ոչ պաշտոնական և 4 պաշտոնական երկխոսություններ ունեցավ Բյուզանդական Ավանդության Օւղղափառ Եկեղեցիների հետ⁶:

⁵ Christine Chaillot and Alexander Belopopsky, Towards Unity The Theological Dialogue between the Orthodox Church and Oriental Orthodox Churches, Geneva, 1998. I, 35:

⁶ Արևելյան Օւղղափառ (Քաղկենուական) և Դին Արևելյան Օւղղափառ (ոչ Քաղկենուական) Եկեղեցիների միջև գրադարձ և ունեցել հերթյան համեմունքը.

Ոչ պաշտոնական հանդիպումները գրադարձ և ունեցել.

Ապրիլս (Դասիա), օգոստոս 11 – 15, 1964 թ., Թրիստոն (Ալեքսիա), հուլիս 25 – 29, 1967 թ., Ժնև (Շվեյցարիա).

Այս Եկեղեցիների թվին են պատկանում Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքությունը, Անդրութի և Համայն Արքեպիքի Ուղղափառ Պատրիարքությունը, Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Ուղղափառ Պատրիարքությունը, Երոսաղեմի Ուղղափառ Պատրիարքությունը, Ռուս Ուղղափառ Եկեղեցին, Վրաց Ուղղափառ Եկեղեցին, Բուլղար և Օումբի Ուղղափառ Եկեղեցիները, Հունասրանի և Համայն Ելլադայի Ուղղափառ Եկեղեցին, Լիհասարանի և Ֆինլանդիայի Մերժուառությունները, ԱՄՆ Ուղղափառ Եկեղեցին և այլն:

Այս Եկեղեցիներից մի քանիսի հետ Հայ Եկեղեցին ունի հարաբերությունների հարուստ պատրմական փորձառություն, որոնց մեջ առանձնանում են հարկապես Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքությունը, Ռուս և Վրաց Եկեղեցիները:

Թեև Ն.Ս.Օ.Ս.Տ. Վազգեն Ա Հայրապետի գահակալության վարիներին Հայ Եկեղեցին ուղղակի քանակությունների մեջ չեղ այս Եկեղեցիների հետ, սակայն իր անձնական կապերով և փոխադարձ այցելությունների միջոցով քավականին լուրջ հիմքերի վրա էին դրված նրանց հետ Հայ Եկեղեցու հարաբերությունները:

Վազգեն Ա-ի գահակալության շրջանում Հայ, Ռուս և Վրաց Եկեղեցիները զարգացրել էին սերպ հարաբերություններ՝ ի խնդիր խաղաղության հասքարաման, Եկեղեցականաց սերնդի պատրաստման և կոմոնիխարական դարաշրջանի մարդարավերների դեմ լուր պայքարի գործում:

Առանձնակի ուշադրության է արժանի հարկապես Վազգեն Ա Հայրապետի կապերը Ռուս Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքներ Ալեքսի Ա Սիմանսկու, Դիմենի և Ալեքսի Բ-ի հետ: Գրեթե յուրաքանչյուր հայրապետական այցելության ընթացքում (ԽՍՀՄ վարիներին Հայաստանից միջազգային թույժները հիմնականում իրականացվում էին Մոսկվայից) Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետն անձնական հանդիպումներ է ունեցել Ռուս Եկեղեցու պետի հետ:

Որպես հայ-ռուսական ջերմ, դարավոր հարաբերությունների արդյունք՝ Հայ Եկեղեցու պատրիարքակությունը, Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների բոլոր գահակալների մասնակցությամբ, Վրարայշյան նախամեծար Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ծայրագույն Պատրիարքի դեկապարությամբ, ներկա է գրնում Մոսկվայում և Սերգիև Պուստում (նախկինում Զագորյու) Ռուսիոն մկրտության 1000-ամյա հորեւյանին նվիրված միջոցառումներին և ի պատիվ այդ նշանավոր իրադարձության գոնական միջոցառումներ իրականացնում Ա. Էջմիածնում:

Ավելին, ձեռքբերված պայմանագրովածությամբ, որը սկսվել էր դեռևս Գևորգ Զ Չորեքշյան Կաթողիկոսի օրոր, Մայր Աթոռից ուղարկված միաբաններն ուսանում են Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում:


Ռուս Եկեղեցու հետ հարաբերություններում հարկապես Ամենայն Հայոց Կաթողիկոսը խթանում էր ԽՍՀՄ-ում անցկացվող «Խաղաղության միջազգային կոնֆերանսները»:

օգոստոս 16 – 21, 1970 թ., Ադրբ Արևիա (Երևանի առաջնային համալսարան), հունվար 22 -23, 1971 թ.

Պաշտոնական երկխոսությունները գրանցվել են ունեցել:

Շամրևիկ (Շվեյցարիա), դեկտեմբերի 10 – 15, 1985 թ., Ամրա Բիշոյի վանք (Եղիպատոս), հունիս 20 – 24, 1989 թ.

Շամրևիկ (Շվեյցարիա), սեպտեմբերի 23 – 28, 1990 թ., Շամրևիկ (Շվեյցարիա), նոյեմբերի 1-6, 1993 թ.:



ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹԵՏԸ ՊՐԻՎԱՏ Զ ՊԱՐԱ ՀԵՏ
(Վանական, 1970 թ. սպառ)



ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ԿՐԵՄԱՆՎԱՐԱՆԻ ԿԱՐԱԳԱՎԱՐԱԿԱՆ ՎԱՐԱՆՏԻՔԻ ՎԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԱՆՏԻՔ
ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ԿՐԵՄԱՆՎԱՐԱՆԻ ՎԱՐԱՆՏԻՔԻ ՎԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԱՆՏԻՔ



1993 թ. Ուստաց Պատրիարքի նախաձեռնությամբ գեղի է ունենում Վեհափառի և Աղքաղաքանի Մոլիտվի հանդիպումը, որ կոչ է արվում Արքախյան հիմնահարցը լուծել խաղաղ ճանապարհով:

Վերադարձնալով Ուղղափառ Եկեղեցիների հետ բանակցություններին, նշենք, որ Եկեղեցական երկու ընդամենքին կողմից էլ պատվիրակությունները ներկայացված են Եղել առաջարար աստվածաբանների կողմից: Բանակցությունների ընթացքում, որոնցից վերջինը գեղի է ունեցել 1993 թվականին, Շվեյցարիայում, Ժնևի մոտ գրինվող Հոյն Օրթոդոքս Շամբեզի կենտրոնում, ձեռքբերված համաձայնությունների մեջ ամենակարևորը Քրիստոսաբանության հարցի շուրջ է⁷:

Հարաբերությունները Կաթոլիկ Եկեղեցու հետ

1962 թվականին, Հովհաննես ԽԳ Պապի գահակալության վերջին տարիներին, սկսվեց Վարդիկանի Բ ժողովը, որն ավարտվեց Պողոս Զ Պապի օրոք: Սա նոր իրողություն էր Վարդիկանի պատմության մեջ և, ի տարրերություն 1870 թվականի Վարդիկանի Ա ժողովի, ավելի միտված էր դեպի Եկեղեցու առաքելության զորացումն ու համարիսկունեական միության ծգությունը: Ժողովին դիմուրդի կարգավիճակով մասնակցում էին նաև գարբեր Եկեղեցիների աստվածաբաններ, այդ թվում և Հայ Եկեղեցու ներկայացուցիչները՝ Պարզե եպս. Գևորգյանը, ապա Գարեգին եպս. Սարգսյանը (այսուհետ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս)՝ Մեծի Տաճի Տիլիկի Կաթողիկոսությունից:

Հայ Եկեղեցու ներկայացուցիչն Վարդիկանում դիմուրդ նշանակելու մասին Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1963 թվականին հանդես է գալիս հայրարարությամբ՝ ուղղված Հայ Առաքելական Եկեղեցու Գերագոյն Հոգևոր Խորհրդին: Կաթողիկ Եկեղեցու բարեկարգությանը նվիրված հարցերից զար ժողովն իր 27-րդ նիստում պարզաբանում է Կաթոլիկ Եկեղեցու գեսակերը «Եկեղեցիների միության խնդրում»⁸:

Վարդիկանի Բ ժողովից հետո նոր էշ է բացվում Կաթոլիկ և Հայ Եկեղեցիների հարաբերությունների պատմության մեջ, որն արյունավորվում է մի շարք համաձայնագրերի ստորագրմամբ և վստահության մթնոլորդի սպեղծմամբ⁹: Վարդիկանի Երկրորդ ժողովից հետո Կաթոլիկ Եկեղեցու Սրբազն քահանայապետ և Հովհաննես Պողոս Զ-ի հրավերով Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը 1970 թվականի մայիսին մեկնում է Վարդիկան¹⁰:

⁷ Տե՛ս Christine Chaillet and Alexander Bclopopsky, Towards Unity The Thological Dialogue between the Orthodox Church and Oriental Orthodox Churches, Geneva, 1998.

⁸ Տե՛ս «Ազգապարտություն», ԽԳ. 91-97:

⁹ Հայ Եկեղեցու պատմության թվակցում Հայ-Կաթոլիկ Եկեղեցական հարաբերություններն սկսվում են 12-րդ դարից: Սակայն նրբեւ, չի արձանագրվի մեկ փասդ, չնայած բանափրառության մեջ առակա մի բանի ոչ վավերական փասդերի կենդումի, որ Հայ Եկեղեցու գահականընը այցելեն Հռոմ և որպես հավասար հավասարի հետ բանակցեն Հռոմի բահանայապետի հետ: Միակ դեպքը, որ փեղի լր ունեցել մինչև 1970 թվականի Հռոմի Սրբազն Քահանայապետ Պողոս Զ Պապին Վազգեն Ա -ի ացելությունը, 1547 թվականի Հայաստանի ապարագության համար գրինարքած Եջմիածին գաղթի ժողովից հետո Սրբազնություն և Սամասարքից Կաթողիկոսի այցելությունն իր նպարակ ունենալով Հորեցանական՝ 1550 թ. գարում հանդիպել Պապի հետ և Հայաստանի ապարագության համար արևմտյան վերությունների օժանդակությունը խնդրել:

¹⁰ Տե՛ս S. S. Վազգեն Ա Հայուսպետի իններորդ ուղևորությունը, Լժմածին, 1970.

Պողոս Զ Պապի հետ հանդիպման ընթացքում Վազգեն Ա Կաթողիկոսը նշում է. «Այս օրերուն նոր էջ բացինք Հայոց Եկեղեցվոյ պարբուժյան մեջ: Երանի թե Սուրբ Հոգու ննարշմաք Մենք և Մեր հաջորդները կարողանանք այս մաքոր էջին վրա արձանագրել Վկայությունները մեր սիրույն, մեր եղբարության և մեր քրիստոնանվեր գործերուն», իսկ ի պատվասխան Վեհափառի խոսքի Դումի Պապը նշում է. «Միասնաբար շնորհակալություն հայրեններ Տիրոջը, որ օրավոր աստիճանաբար հայքնաբերել է փախս մեզ այսօրվա փարակարծություններից և անցյալի հակադրություններից վեր՝ մեր Եկեղեցիների միջև զոյություն ունեցող այդ հաղորդության խոր և խորիրդական իրականությունը»¹¹:

Դավարդ այցելության երկու Եկեղեցիների պետքերի միջև կնքվում է համաձայնագիր, որ հոգևոր երկու առաջնորդներն իրենց Եկեղեցու գավակներին կոչ են անում «ավելի միության», կոչ անում աստվածաբաններին՝ ավելի տասնմասիրելու միմյանց պատրիարքունք, ավանդությունները՝ հավաքարիմ մնալով Դին Եկեղեցու ավանդությանը: Ասվում է, որ, հաշվի առնելով նոր ժամանակների մարդարավերները, Պապն ու Կաթողիկոսն իրենց կողմից պիտի փորձեն հենրևելու դրանց, և աղորական կյանքի կոչ են անում բոլորին խաղաղության և համագործակցության համար¹²: Ակնհայտ է, որ այս այցելությունը նոր եկմբերի վրա դրեց Վարդիկանի հետ Հայ Եկեղեցու հարաբերությունները:

Վարդիկ Եկեղեցին ներկայի Եկումնիկ շրջանակներում մաս չի կազմում ԵՆԱ-ի՝ ինքնուրույն հարաբերություններ վարելով քոյլ Եկեղեցիների հետ: Մինչ Վազգեն Ա-ի այցելությունը, Դում էին այցելել Դին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների մի շարք պետքեր: Մեծի Տան Կիլիկիո Կարողողիկոս Խորեն Ա Բարդյանը ևս այցելել էր Վարդիկան 1967 թվականին: Եվ բնական է, որ Վազգեն Կաթողիկոսը Խորհրդային Միության փարիներին չէր կարող ծավալել այն գործունությունը, այն էլ հոռմեական Եկեղեցու հետ, որը կարող էին վարել ոչ խորհրդային երկրների Եկեղեցիների առաջնորդները:

Որպես արքունիք այս հանդիպման Հայ և Կաթողիկ Եկեղեցիների աստվածաբանները, Դին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչ աստվածաբանների հետ սկսում են ոչ պաշտոնական աստվածաբանական երկխոսություններ Վիեննայում, Պրո-Օրիենտի կազմակերպության հովանու ներքո, որպես արձագանք ձեռքբերված համաձայնությունների: Այս բանակցություններում գործոն մասնակցություն են ունենում երջանկահիշապակ Գարեգին Ա Կաթողիկոսը, լուսահոգի Տ. Տիրան արքեպոս. Ներսոյանը, Արամ Ա Մեծի Տան Կիլիկիո Կարողողիկոսը, Տ. Մեսրոպ արքեպոս. Գրիգորյանը և ուրիշներ:

Վազգեն Վեհափառի օրոք սկսված հարաբերությունները դրական լիցքեր հաղորդելով երկու Եկեղեցիների բարեկամական հարաբերություններին՝ շարունակվում են մինչև այսօր: Նարկ է նաև նշել, որ Վազգեն Ա-ի գահակալության փարիներին Վարդիկան Էջմիածնին վերադարձեց Ս. Թաղենու և Ս. Բարդուղիմնոս առաջալների մասունքները:

¹¹ Տե՛ս նույնը, լ. 50:

¹² Պապի և Ամենայն Հայոց Հայուսպերի միջև կնքված հոչակագիրը գրեն նույնը, լ. 59-60: